

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.22-րդ կետերի դրույթներով

### **Կարգադրում էմ՝**

1. Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Հովհաննիսյան Վ. – մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ, նախագահ

Հովհաննիսյան Դ. – մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

Հակոբյան Գ. – ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի պետ

2. Հանձնաժողովին՝ 2-օրյա ժամկետում ճշտել մարզում արտակարգ իրավիճակներ առաջացնող առավել վտանգավոր տարածքները և պահանջվող կանխարգելիչ միջոցառումները՝ մարզային փրկարարական վարչություն ներկայացնելու համար:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Գ. Ստեփանյանին :

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ